ОБЪЯВЛЕНИЕ
о расторжении заключенного договор

Министерство окружающей среды ниже представляет краткую информацию об одностороннем частичном расторжении, внесенных 6-ого сентября 2023 года в договор № МОС-ЗКПР-22/05, заключенный 2022 года 26-ого сентября в результате процедуры закупки под кодом № МОС-ЗКПР-22/05 организованной с целью приобретения «Работ по по «Разработка проектно-сметной документации по очистке рек от замусоривания и загрязнения, впадающих в озеро Севана» для своих нужд.

Причина возникновения изменения	Выполненная исполнителем работа не соответствует требованиям, указанным в техническом задании-графике закупок, определенном в приложении № 1 к договору, и срокам выполнения работ.
Описание изменения	На основании пункта 2.1.3 Соглашения Заказчик в одностороннем порядке расторгает Соглашение, поскольку: а) Исполнитель существенно нарушил требования, определенные договором, и выполненная работа не соответствует требованиям, определенным в техническом задании-графике закупок, определенном в приложении № 1, б) срок выполнения работы был нарушен.
Обоснование изменения	Пункт 2.1.3 договора.

Для получения дополнительной информации, связанной с настоящим объявлением, можно обратиться к секретарю Оценочной комиссии Т.Меграбяну.

Телефон **011-81-85-29**

Электронная почта gnumner@env.am

Заказчик **Министерство окружающей среды Республики Армения**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
REPUBLIC OF ARMENIA
SECRETARY GENERAL OF MINISTRY OF ENVIRONMENT
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ МИНИСТЕРСТВА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

№ 5/06.2.2/12630

«06» «09» 2023

«Ջինջ» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Էդուարդ Մեսրոպյանին
ք.Երևան, Չոլակյան փող., տ.38

Հարգելի պարոն Մեսրոպյան

Ի պատասխան 2023 թվականի օգոստոսի 18-ի N ԷՄ-113 գրության՝ շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ջինջ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2022 թվականի սեպտեմբերի 26-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-22/05» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Կատարողի ներկայացված հաշվետվության վերաբերյալ ներկայացնում եմ Պատվիրատուի դիտարկումները:

Հաշվետու փաստաթղթերում բացակայում է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 596-Ն որոշմամբ սահմանված կարգով նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում համալիր փորձաքննության եզրակացությունը, ինչը որպես դիտարկում ներկայացվել էր դեռևս շրջակա միջավայրի նախարարության 2023 թվականի հուլիսի 17-ի 5/06.2.2/10917 գրությամբ:

Հաշվետու փաստաթղթերի գիրք 1-ի 37-րդ էջի 4-րդ պարբերությունում նշված է «Բնակավայրերում առաջացած կենցաղային աղբի ծավալների հաշվարկման հիմքում ընկած է մեր երկրում ընդունված նորմը» արտահայտությունը, սակայն նորմի իրավական հիմքը բացակայում է:

Հաշվետու փաստաթղթերի գիրք 1-ի Հավելված 1-ում Ծակքար և Կարճաղբյուր գետերի հիդրոլոգիական տվյալներ բաժնում ներառված չեն 2022 թվականի տարեկան և 2023 թվականի առնվազն 1-ին եռամսյակի արձանագրված տվյալները:

Հաշվետու փաստաթղթերում բացակայում է աշխատանքների իրականացման ժամկետը, ինչի կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ

0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
3 Government Bld., Republic Sq., Yerevan, Armenia, 0010
0010, Армения, г.Ереван, Пл. Республики, Дом Правительства 3
10010608@e-citizen.am | minenv@env.am | www.env.am
+374 11 818 520 | +374 11 818 506

գետերը համարվում են Սևանի իշխանի գեղարքունի և ամառային էնդեմիկ ենթատեսակների ձվադրավայրեր:

Ըստ տեխնիկական բնութագրի պետք է հաշվետու բոլոր փաստաթղթերի (տեքստային և գրաֆիկական նյութերի, նախահաշվի) ամբողջական փաթեթը ներկայացվեր 5 օրինակից, հայերեն և ռուսերեն լեզուներով, էլեկտրոնային և փաստաթղթային տարբերակներով, ինչը Կատարողի կողմից չի ապահովվել (Հաշվետու փաստաթղթերը ներկայացվել են 1 օրինակից, հայերեն, էլեկտրոնային և փաստաթղթային տարբերակներով):

Հաշվի առնելով վերոնշյալ թերացումները և Կատարողի կողմից ուշացումների հետևանքով Պատվիրատուի Սևանա լիճ թափվող գետերն աղբոտումից և աղտոտումից մաքրման աշխատանքների կազմակերպման պարտադրված հետագա պլանների փոփոխման հանգամանքը (պայմանավորված նախագծանախահաշվային փաստաթղթերի բացակայությամբ 2024 թվականի բյուջեում ծրագիրը չի ընդգրկվել)՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը՝ Պատվիրատուն նախաձեռնում է Պայմանագիրը միակողմանի լուծելու գործընթաց, քանի որ Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Մասնավորապես՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Ընդունել ի գիտություն, որ կիրառվելու է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

06/09/2023

X

ԱՐԿԱԴԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN ARKADI 2901780121

Հարգանքով՝
պարտականությունները կատարող Արկադի Խաչատրյան

Ֆինանսատնտեսական վարչության
Ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժին
Տաթևիկ Մեհրաբյան 011 818 529